ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 29.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/47 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Գազկոմշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գազկոմշին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 29.03.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01» ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Գազկոմշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով մերժվել է «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը՝ այն հիմնավորմամբ, որ հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, սակայն պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվեր Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 21.03.2018թ. հրապարակվել է «ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01» ծածկագրով բաց մրցույթի հրավեր: Ընկեությունը սահմանված կարգով և ժամկետներում մասնակցության հայտ է ներկայացրել է Ընթացակարգին: Հայտերի բացումը տեղի է ունեցել էլեկտրոնային ձևով՝ համակարգի միջոցով 21.03.2018թ.: Պատվիրատուն հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությունով «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժել է՝ նշելով, որ այն չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես նշելով, որ հայտի ապահովման բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար պետք է նշվեր ոչ թե Պատվիրատուի անվանումը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, այլ ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 4-րդ բաժնի 19-րդ կետի 2-րդ ենթակետի խախտումներով, ինչը չի բխում գործող օրենսդրության պահանջներից:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է Օրենքի 34-րդ հոդվածի դրույթները, ինչպես նաև Կարգի 4-րդ բաժնի 19-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի հրավերի տուժանքի մասին համաձայնագրի (հավելված 9) և մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրի մեջ

որպես շահառու նշված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, իսկ Ընթացակարգի հրավերում առկա փաստաթղթերից հավելված 11-ի մեջ (պայմանագրից բխող պարտավորությունների կատարման ապահովման բանկային երաշխիք) որպես բենեֆիցիար նշված է ՀՀ ֆինանսների նախարարությունը, իսկ Ընկերության դեպքում Ընթացակարգի մասնակցության հայտի ապահովում բանկային երաշխիքը պետության համար պարտավորություններ չի առաջացնում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ Ընկերության վերջինս նշված գնման ընթացակարգին ներկայացրել է Օրենքով սահմանված հրավերի պահանջներին համապատասխան բոլոր փաստաթղթերը՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է

1. դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2018թ. թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2. դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2018թ. թիվ 2 արձանագրության 4-րդ կետով «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու մասին որոշումը:

«Գազկոմշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.04.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը 04.04.2018թ. թիվ 02/08/1666-18 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը մերժել է «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը, քանի որ Ընթացակարգի հրավերում՝ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում որպես բենեֆիցիար պետք է նշվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.04.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/47 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/47 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Գազկոմշին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 11-րդ հավելվածով նախատեսվել է երաշխիքի օրինակելի ձևը, որի մեջ որպես բենեֆիցիար նշվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

3. Ընկերությունը որպես հայտի ապահովում ներկայացրել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 21.03.2018թ. տրված թիվ 1965-02 երաշխիքը, որի մեջ որպես բենեֆիցիար նշվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2018թ. ժամը 11:00-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, սակայն պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում որպես բենեֆիցիար պետք է նշվեր Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով «Գազկոմշին» ՍՊԸ-ի 29.03.2018թ. բողոքը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի 04.04.2018թ. թիվ 02/08/1666-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և

(կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Գազկոմշին» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում հայտով ներկայացրել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 21.03.2018թ. տրված թիվ 1965-02 երաշխիքը, որի մեջ որպես բենեֆիցիար նշվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.03.2018թ. ժամը 11:00-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, սակայն պետության համար պարտավորություններ առաջացնող

գնումների գործարքների դեպքում որպես բենեֆիցիար պետք է նշվեր Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս գտնում եմ, որ վերոհիշյալ հիմքով մերժելով «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ՝ հետևյալ հիմնավորմամբ.

Ընթացակարգի հրավերի 11-րդ հավելվածով նախատեսվել է երաշխիքի օրինակելի ձևը, որում նախօրոք հրավերով որպես բենեֆիցիար նշված է եղել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը: Ընդ որում՝ նույն հավելվածում նախատեսվել է հղում, որտեղ նշված է, որ ***պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:***

Հավելված 11
«ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01» ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N _____

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է _____
(անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը[1]) և _____ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
(անունը, ազգանունը կամ անվանումը)

_____ կնքված N _____ պայմանագրից բխող պրինցիպալի
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով _____(այսուհետ՝ երաշխիք տվող անձ)
(երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն
կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել
_____ (_____) _____ (այսուհետ՝
(գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ)

երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո _____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

---

[1] *Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:*

*** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:**

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

_____ բանկում բացված _____
(բանկի անվանումը) (բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է _____ մինչև _____ ներառյալ:
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) _____
2) _____
3) _____:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը _____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)
աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ _____ չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _____

_____
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

«Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար նշվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, մինչդեռ Ընթացակարգի հրավերի 11-րդ հավելվածով երաշխիքի օրինակելի ձևի մեջ որպես բենեֆիցիարմնշված է եղել ՀՀ ֆինանսների նախարարությունը: Հետևաբար արձանագրում եմ, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքը չի համապատասխանում «ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին:

Դրա հետ մեկտեղ ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի ընդհանուր օրինակելի ձևը:

Նշված որոշման 2-րդ կետով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների ղեկավարները «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում երաշխիքը պետք է պահանջեն սույն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին համապատասխան:

«ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 12-րդ հավելվածով նախատեսված երաշխիքի օրինակելի ձևը համընկնում է ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատված հավելվածով նախատեսված երաշխիքի օրինակելի ձևին:

Միևնույն ժամանակ ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի ընդհանուր օրինակելի ձևը ուստի այն կարող է կիրառվել թե հայտի ապահովում և թե պայմանագրի ապահովում ներկայացնելիս: Միևնույն ժամանակ յուրաքանչյուր դեպքում ներկայացնելիս երաշխիքը բովանդակային առումով պետք է համապատասխանեցվի ըստ նպատակի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում:

Հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3 ենթակետի 5-րդ պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս արձանագրում եմ նաև, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից Armeps համակարգի միջոցով ներկայացված հայտին կից ներկայացված՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 21.03.2018թ. տրված թիվ 1965-02 երաշխիքի մեջ նշված է, որ այն ներկայացվում է «ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01» ծածկագրով ***պայմանագրից*** բխող պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովման համար, մինչդեռ հրավերով պահանջվել է, որ մասնակիցը սկզբնապես հայտով ներկայացնում է հայտի ապահովում, իսկ Ընկերության կողմից ներկայացված բանկային երաշխիքի մեջ նշված է, որ այն ներկայացվում է որպես պայմանագրից բխող պարտավորությունների կատարման ապահովում:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ուսումնասիրելով «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01» ծածկագրով բաց մրցույթի մասնակցության հայտի ապահովման բանկային երաշխիքը, գտնում եմ, որ այն չի համապատասխանում «ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին: Ինչպես նաև, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտի ապահովումը, համաձայն Կարգի 41-րդ կետի շտկման ենթակա չէ, ուստի գտնում եմ, որ մերժելով Ընկերության հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 29.03.2018թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 29.03.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**